Արձանագրություն N 12

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի

Օրակարգ

1.Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2015 թվականին իրականացված միջոցառումների մասին

*/ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ **Ա.Թանաշյան** /*

2. «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» ամենամյա հանրապետական քարոզարշավի մասին

/ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ծրագրերի պատասխանատու ***Ծ.Հարությունյան***/

3.Այլ հարցեր և վերջին զարգացումների ներկայացում հանձնաժողովի անդամների կողմից

/հաձնաժողովի անդամներ/

4. Ելույթներ, մտքերի փոխանակում

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ***(հանձնաժողովի նախագահ)***
Ա.Վարդանյան	ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետի տեղակալ
Գ. Աբրահամյան	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի բնակչության պաշտպանության քաղաքականության ծրագրերի և տեղեկատվական հոսքերի կառավարման վարչության աղետների ռիսկի գնահատման և կառավարման բաժնի պետ
Գ. Հայրապետյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ
Ծ.Հարությունյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ծրագրերի պատասխանատու
Լ.Աղաբեկյան	ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ներկայացուցիչ
Ջ.Անդերսոն	ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների և օրենսդրության հզորացման միջազգային ծրագրի ղեկավար
Մ.Հավհաննիսյան	ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչ
Ս.Վարդանյան	«Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ
Ա. Հովհաննիսյան	ՄԱԿ-ի զարգացման ծրագրի պատասխանատու
Տ. Աղաբեկյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության անդամ

Ա. Գալստյան	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ գործադիր տնօրեն
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ ***(հանձնաժողովի քարտուղար):***

Սույն թվականի դեկտեմբերի 16-ին տեղի ունեցած Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ **Ֆ. Բերիկյանը**: Նա հանձնաժողովի անդամների հետ համաձայնեցրեց օրակարգը և ամփոփ ներկայացրեց հանձանժողովի անցած 5 տարիների աշխատանքը և ձեռքբերումները, կարևորեց հանձաժողովի դերը՝ որպես հանրապետությունում գենդերային, ներառյալ ընտանեկան բռնության վերաբերյալ քաղաքական և ռազմավարական փաստաթղթերի մշակման, քննարկման, իրականացման և աշխատանքների համակարգման կառույցի: Նշեց, որ այս տարիների ընթացքում հանձնաժողովի, դրա շրջանակներում ստեղծված աշխատանքային խմբերի կողմից մշակվել, քննարկվել և կյանքի են կոչվել մի շարք փաստթղթեր. «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը», «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը», «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015-2017 թվականների ծրագիրը», «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրից» բխող ամենամյա ծրագրերը և այլն: Ֆ.Բերիկյանը նշեց նաև, որ հանձնաժողովը հնարավոր հարթակ է հանդիսացել նաև ոլորտում իրականացված հետազոտական և վերլուծական աշխատանքների մեթոդական և քարոզչական նյութերի քննարկման և հրապարակման, ինչպես նաև շահագրգիռ մարմինների, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին տեղեկացված լինելու համար: Հատկապես կարևորեց ՄԱԿ- Բնակչության հիմնադրամի դերը, որն այս տարիներին սատար է կանգնել հանրապետությունում գենդերային բռնության երևույթի կանխարգելմանն ուղղված պետական նախաձեռնություններին: Ավարտելով իր խոսքը, պարոն Բերիկյանն անդրադարձավ ապագա անելիքներին, որոնք պետք է ուղղված լինեն ոլորտի օրենսդրության բարեփոխումներին, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության, աջակցության մեխանիզմների ներդրմանը և համապատասխան ծառայությունների ստեղծմանը, ինչպես նաև կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված աշխատանքներին:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ տիկին **Ա.Թանաշյանը**: Նա հանձնաժողովի անդամներին ներկայացրեց 2015 թվականի ընթացքում ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 26-ի նիստում N13 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2015 թվականի միջոցառումների տարեկան ծրագրով» նախատեսված միջոցառումների շրջանակներում կատարված աշխատանքները: Մասնավորապես, հանձնաժողովի անդամներին ծանոթացրեց «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերին՝ 2015 թվականի սեպտեմբերի 10-ի

«Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» N1044-Ն և «Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց ցանկը, կացարանով ապահովելու կարգը և պայմանները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի N 614-Ն ու 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման մեջ լրացում ու փոփոխություն եվ 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1516-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1069-Ն որոշումներին, 2015 թվականի հոկտեմբերի 20-ի «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 144-Ա/1 հրամանի, ինչպես նաև 2015 թվականի դեկտեմբերի 10-ի «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 177-Ա/1 հրամանը: Նա նշեց, որ.

- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1044-Ն որոշմամբ կարգավորվում են սոցիալական աջակցության տրամադրման գործընթացում համագործակցության կողմերի, համագործակցության շրջանակներում կողմերի իրավունքների ու պարտականությունների, միջգերատեսչական համագործակցության ձևերի ու կարգի, համագործակցող կողմերի միջև փոխանակվող տեղեկությունների ծավալի, ժամկետի և ձևի մասին պահանջների, խնդրահարույց՝ այդ թվում ընտանեկան բռնության դեպքերի մշտադիտարկման և գնահատման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները,
- ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն սահմանվել է ընտանեկան բռնության ենթարկված անձանց, այդ թվում՝ երեխաներին, որպես ժամանակավոր օթևան՝ կացարան (այսուհետ՝ օթևան) տրամադրելու, ինչպես նաև կացարանում այդ անձանց սոցիալական ծառայություններ տրամադրելու հետ կապված հարաբերությունները,
- 2015 թվականի հոկտեմբերի 20-ի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 144-Ա/1 հրամանով հաստատվել են ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչները, ինչը ապահովում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացում իրականացնող մարմիններին համապատասխան գործիքներով,
- 2015 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 177-Ա/1 հրամանով հաստատված ուղեցույցը կնպաստի ընտանեկան բռնության ենթարկված անձանց նույնացման, ուղղորդման և սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացին, ինչպես նաև կապահովի ընտանեկան բռնության ենթարկված անձանց նույնացում իրականացնող մարմիններին համապատասխան գործիքներով և մեթոդաբանությամբ:

Ա.Թանաշյանը հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ Արարատի մարզի սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների շուրջ 20 սոցիալական աշխատողների (դեպք վարողների) համար կազմակերպվել է «Ընտանեկան բռնություն» թեմայով դասընթաց, որն ուղղված է ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունների

արդյունավետ կազմակերպմանը, ինչպես նաև ինտեգրված սոցիալական ծառայողների գործառույթների հստակեցմանը և համապատասխան հմտությունների ձեռքբերմանը:

Անդրադարձավ նաև հանրապետությունում գենդերային քաղաքականության շարունակականությունն ապահովելու նպատակով ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների առկա իրավիճակի վերաբերյալ» ուսումնասիրությանը և «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015-2017 թվականների ծրագրի» շրջանակներում տարվա ընթացքում կատարված աշխատանքներին:

Ընտանեկան բռնությամբ զբաղվող մասնագետների կարողությունների զարգաման վերաբերյալ ելույթ ունեցավ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետի տեղակալ **Ա.Վարդանյանը** և նշեց, որ ՀՀ ոստիկանության և ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի միջև իրականացվող փոխհամագործակցության շրջանակներում Երևան քաղաքի երեք համայնքներում և Վանաձոր քաղաքում իրականացվող փորձնական ծրագրի շրջանակներում իրականացվել են վերապատրաստման դասընթացներ, մշակվել են տեղեկատվական նյութեր և ոստիկանության 5 համայնքային բաժանմունքներում ստեղծվել են տեղեկատվական անկյուններ:

«Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Ս.Վարդանյանն էլ կարևորեց բռնության ենթարկված անձանց համապատասխան ծառայությունների ստեղծման հարցը, հույս հայտնեց առաջիկայում այդ ծառայությունների պետական ֆինանսավորման և այդ շրջանակներում հասարակական կառույցների հետ համագործակցության մեխանիզմների ձևավորման համար:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ծրագրերի պատասխանատու **Ծ.Հարությունյանը:** Նա նշեց, որ Հայաստանը այս տարի ևս միացավ նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 10-ը գենդերային բռնության դեմ ակտիվության 16-օրյա համաշխարհային քարոզարշավին, որի նպատակն է խթանել կանանց և աղջիկների նկատմամբ բռնության վերացմանն ուղղված գործողությունները: Գենդերային բռնության դեմ ակտիվության 16-օրյա քարոզարշավը հանրապետությունում համակարգվեց ՄԱԿ-ի, գործընկեր պետական մարմինների և հասարակական կառույցների ջանքերով: Մինչ քարոզարշավի մեկնարկը ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը Գենդերային Թեմատիկ Խմբի անդամներից հավաքել էր միջոցառումների մասին տեղեկատվությունը, որի հիման վրա կազմվել էր 16-օրյա միջոցառումների օրացույց և ներկայացվել Գենդերային Թեմատիկ Խմբին՝ նոյեմբեր ամսին տեղի ունեցած հանդիպման ժամանակ: Միջոցառումների օրացույցն այս տարի կազմված էր ավելի քան 35 միջոցառումներից, որոնք տեղի ունեցան Երևանում և մարզերում: Քարոզարշավը մեկնարկեց 16-օրյա արշավի բացման երթով, որը կազմակերպել էր «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան: Հասարակության ուշադրությունը այս կարևոր խնդրին առավելագույնս սևեռելու համար նոյեմբերի 25-ին կազմակերպվեց մամլո ասուլիս, որտեղ Հայաստանի կառավարությունը, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի դեսպանությունները, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը, Երևանում ԵԱՀԿ գրասենյակը, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակը, Միավորված ազգերի կազմակերպության Հայաստանի գրասենյակը, քաղաքացիական հասարակության գործընկերների հետ համատեղ ազդարարեցին Գենդերային բռնության դեմ ակտիվության 16-օրյա համաշխարհային քարոզարշավի

մեկնարկը: Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունները և դեսպանությունները Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օրվա առիթով հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ ողջունեցին Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում դրական քայլեր ձեռնարկելու համար, խրախուսեցին իշխանություններին շարունակել կանանց իրավունքների պաշտպանության և դրանց նկատմամբ հարգանք խթանող միջազգային և ազգային չկատարված հանձնառությունների իրականացումը, դրվատեցին հասարակական կազմակերպությունների ջանքերը և պատրաստակամություն հայտնեցին շարունակել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը ցուցաբերվող աջակցությունը՝ բոլոր կանանց և աղջիկների իրավունքների իրացմանն ուղղված կոնկրետ քայլեր ձեռնարկելու համար, որպեսզի նրանք կարողանան ապրել բռնությունից զերծ կյանքով: 16-օրյակի ընթացքում հանրապետությունում կազմակերպվեցին ցուցահանդեսներ, հանրային դասախոսություններ, աշխատաժողովներ, դասընթացներ կանանց համար, իրազեկման այցեր մարզեր, կինոցուցադրություններ եւ քննարկումներ, մոմավառություն, լանչ լրագրողների մասնակցությամբ, «Մարդկային գործոն» հեռուստատեսային թոք շոու, բանավեճեր, կլոր սեղաններ, ֆլեշմոբեր, սեմինարներ, «Թատրոն 24 ժամում» ներկայացումներ, ինտերակտիվ ներկայացում թոք շոու «Ինչո՞ւ է բողոքում արագիլը», «Նե-ի ճամփորդությունը» տիկնիկային ներկայացում՝ գենդերային անհավասարության և գենդերային բռնության վերաբերյալ: Գենդերային բռնության դեմ ակտիվության 16-օրյա քարոզարշավն ավարտվեց եզրափակիչ մամուլի ասուլիսով, որի ընթացքում «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի կողմից ներկայացվեցին արշավի արդյունքները:

Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի գործադիր տնօրեն Ա.Գալստյանը: Նա ներկայացրեց Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ և Սեյվ դը չիլդրընի, «Արմավիրի զարգացման կենտրոն» և «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ների հետ համագործակցությամբ իրականացվող «Պայքար պտղի սեռի խտրական ընտրության դեմ» Ծրագրի գործողություններն ու ձեռքբերումները:

Ա. Գալստյանը շնորհակալություն հայտնեց բոլոր շահառու և շահագրգիռ կողմերին, մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (ՀՀ ԱՍՀՆ), ՀՀ առողջապահության (ՀՀ ԱՆ), ՀՀ արդարադատության նախարարությունների (ՀՀ ԱրդՆախ), Հայ առաքելական Սուրբ եկեղեցու գործընկերներին շահագրգիռ համագործակցության և Ծրագրի գործողություններում անմիջական ու արդյունավետ մասնակցության համար:

Ներկայացվեց, որ 2015թ. մայիս – դեկտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են.

1. մարզային 10 հանդիպումներ, որոնց ընթացքում շահագրգիռ և շահառու կողմերին ներկայացվել է Ծրագրի նպատակներն ու հիմնական խնդիրները,
2. ՀՀ ԱՍՀՆ և ՀՀ ԱՆ հետ համագործակցությամբ ձևավորվել են «Տեղական մասնակցության և ոչխտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանցի 10 մարզային աշխատանքային խմբեր պետական կառավարման տարածքային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կառույցների, համայնքային կազմակերպությունների, բարձրագույն ուսումնական

հաստատությունների, լրատվամիջոցների, կրոնական կազմակերպությունների, ոստիկանության ներկայացուցիչների, ինչպես նաև առողջապահության մասնագետների, սոցիալական աշխատողների, զարգացման մասնագետների և համայնքային գործիչների ներգրավմամբ՝ յուրաքանչյուրում 20-25 մասնակից: Փոխցանցում առանցքային մասնակցություն և դերակատարում է վերապահվում ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գործող Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովներին (ԳՄՀ-ներ),

3. 10 աշխատանքային խմբերի համար կազմակերպվել և իրականացվել է 2 երկօրյա վերապատրաստման դասընթացներ «Արդյունավետ հաղորդակցության և առաջնորդության, բանակցությունների և քարոզչություն հմտություններ» և «Գենդերային հարցեր և ԳԲ, վերարտադրողական իրավունք և առողջություն, սեռի խտրական ընտրություն. պատճառներ և հետևանքներ» թեմաներով,

4. Իրականացվել են «Իրազեկման տեղայնացված գործիքների մշակում» թեմայով 2 աշխատանքային հանդիպումներ Փոխցանցի Արմավիրի, Շիրակի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Տավուշի և Լոռու մարզային աշխատանքային խմբերի մասնակցությամբ: Աշխատանքային հանդիպումների նպատակը պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված իրազեկման և քարոզչական աշխատանքների իրականացման նպատակով հանրային իրազեկման տեղայնացված գործիքների մշակումն է,

5. ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների համատեղ հրամանով հաստատված «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագրի» շրջանակներում և «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագրի» իրականացման նպատակով աշխատանքային խմբի հետ համագործակցությամբ Ծրագրի շրջանակներում նախաձեռնվել է իրավական դաշտի ուսումնասիրություն, նպատակ ունենալով օժանդակել ոլորտում իրականացվող պետական քաղաքականության մշակմանը: Աշխատանքների ընթացքում ի հայտ եկած խնդիրներն ու դրանց ուղղությամբ պետական քաղաքականության հնարավոր տարրերը դրվել են քննարկման կազմակերպված 3 կլոր սեղան քննարկումների ընթացքում՝

a. «Հղիության՝ պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների կանխարգելման և օրենսդրական կարգավորման խնդիրները Հայաստանում»՝ 2015 հունիսի 30-ին,

b. «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների պատճառների վերացմանն ուղղված պետական քաղաքականության տարրերը»՝ 2015թ. հոկտեմբերի 30-ին,

c. «Պտղի սեռի խտրական ընտրության պատճառների կանխման պետական քաղաքականության նախաձեռնություններ»2015թ. նոյեմբերի 30-ին:

6. Ծրագրի մյուս գործընկերների կողմից մարզերում ձևավորվել են Քաղաքացիական 22 ակտիվ խմբեր (ՔԱԽ), որոնց օժանդակությամբ համայնքներում իրականացվելու է քարոզչական աշխատանք, կինոդիտումներ և հանրային քննարկումներ պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի և աղջիկ երեխայի՝ տղա երեխայի հետ հավասար արժևորման խնդիրների ուղղությամբ: ՔԱԽ-երի բոլոր անդամների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ:

7. Մեկնարկել է հեռուստա և ռադիո քարոզարշավը, ինչպես հանրապետության կենտրոնական հեռուստառադիոընկերությունների, այնպես էլ մարզային ՋԼՄ-ների հետ:

Կազմակերպվում են քննարկումներ ծրագրի ներկայացման և խնդիրների քննարկման նպատակով:

8. Մշակվել և ակտիվ քննարկման փուլում են քարոզչական և ուսուցողական 10 նյութերը՝ 5 պաստառներ և 5 էջանշաններ: Ա. Գալստյանը տեղեկացրեց, որ վերջնական նախագծերը պատրաստ լինելուց հետո դրանք կներկայացվեն նաև ՀՀ Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովին, Գենդերային թեմատիկ խմբին, «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագրի» իրականացման նպատակով աշխատանքային խմբին և այլ շահագրգիռ կողմերին:

Ա. Գալստյանը տեղեկացրեց նաև, որ 2016թ. հունվար ամսվա ընթացքում նախատեսվում է հրավիրել «Պայքար պտղի սեռի խտրական ընտրության դեմ» Ծրագրի խորհրդատվական հանձնաժողովի 2-րդ նիստը, որի ընթացքում Ծրագիրն իրականացնող գործընկերները հանդես կգան կարճ հաշվետվությամբ և կներկայացնեն ձեռքբերումներն ու խնդիրները:

ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների և օրենսդրության հզորացման միջազգային ծրագրի ղեկավար ***Ջ.Անդերսոնը*** ողջունելով հանձնաժողովի անդամներին, բարձր գնահատեց հանրապետությունում ընտանեկան բռնության դեմ պայքարի աշխատանքները և նշեց, որ ԱՄՆ դեսպանատունը ևս շահագրգռված է առկա խնդիրների լուծման կապակցությամբ և առաջիկայում հնարավոր աջակցություն կցուցաբերի իրազեկման ապահովման, ուսուցումների կազմակերպման և օրենսդրության կատարելագործման ուղղությամբ՝ բարելավելու համար աշխատանքների համակարգումը ընտանեկան բռնության դեմ պայքարում դերակատարում ունեցող կառույցների միջև:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Ա.Թանաշյանի հաղորդումը:
2. Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Ծ.Հարությունյանի հաղորդումը:
3. Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Ա.Գալստյանի հաղորդումը:
4. Իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ տեղեկացնել հանձնաժողովին առաջիկա նիստերի ընթացքում:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ֆ. Բերիկյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Թանաշյան**
/21.12.2015թ./